ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

<<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ 30.07.2019թ. ԹԻՎ 651-Ա ՀՐԱՄԱՆՈՎ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33)

7 օգոստոսի 2019թ.,
ժամը 11:30

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Քալոյան ՇՇՇ բաժնի պետ

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝

Ա.Կարախանյան ՆԾ ԱՆԿ ղեկավար

Գ.Մանուչարյան ՇՇՇ բաժնի առաջատար ինժեներ

Հանձնաժողովի բացող անդամ՝

Բ.Գևորգյան ՆԾ ՀՕԿ ղեկավար

Գ. Սարգսյան ՆԾ ԱՆԿ ինժեներ

Հանձնաժողովի քարտուղար

Գ. Սարգսյան ԻՊԳ բաժնի մասնագետ

Օրակարգ՝

1. Ընկերության կարիքների համար <<ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-03/19-1>> ծածկագրով Բետոնի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատում

Գ. Սարգսյանը տեղեկացրեց, որ գնումն իրականացվել է էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով:

Հանձնաժողովի նախագահը հրապարակեց սույն ընթացակարգի համար սահմանված նախահաշվային գինը՝ 28 820 990 ՀՀ դրամ:

<<ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-03/19-1>> ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցության հայտ էին ներկայացրել. <<Եղիսաբեթ Ալմազյան Սամվելի>> ԱՁ-ն, <<Բիդեք>> ՍՊԸ-ն և <<ԴՄՀ ՇԻՆ>> ՍՊԸ-ն:

Այնուհետև հանձնաժողովի նախագահը հրապարակեց մասնակիցների գնային առաջակներն՝ առանց ԱԱՀ-ի.

Չափաբաժնի համարը	*Նախահաշվային գինը*	*<<Եղիսաբեթ Ալմազյան Սամվելի>> ԱՁ*	*Բիդեք>> ՍՊԸ*	*<<ԴՄՀ ՇԻՆ>> ՍՊԸ*
1	28 820 990	26975000	22 020 000	21666667

Հանձնաժողովն արձանագրեց, որ <<Եղիսաբեթ Ալմազյան Սամվելի>> ԱՁ և <<ԴՄՀ ՇԻՆ>> ՍՊԸ փաստաթղթերում բացակայում են <<ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-03/19-1>> ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին մասի 1.1 կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված՝ <<Բնակելի, հասարակական և արտադրական>> ոլորտի լիցենզիան, որը համաձայն գնման ընթացակարգի 2-րդ մասի 2-րդ բաժի 2.4 կետի. *<<Ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը համակարգի միջոցով ներկայացնում է հայտ: Հայտին կցվում են սույն հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը (տեղեկությունները)՝ սույն հրավերի 1-ին մասի 7.19 կետով սահմանված կարգով..... 2.4 սույն*

հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը>>, պետք է կցվեր համակար միջոցով ներկայացվող հայտին:

Հանձնաժողովը հիմք ընդունելով <ՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-03/19-1> ծածկագրով գնմ ընթացակարգի 1-ին մասի 7.9 կետը միաձայն որոշեց.

1. կասեցնել բացման նիստը՝ առաջարկելով Եղիսաբեթ Ալմազյան Սամվելի>> ԱՁ-ին և <<ԴՄՀ ՇԻՆ>> ՍՊԸ-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը,
2. գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 09.08.2019թ ժամը 11:30-ին:

Ա. Քալոյան		Հանձնաժողովի նախագահ
Ա.Կարախանյան		Հանձնաժողովի անդամ
Գ.Մանուչարյան		Հանձնաժողովի անդամ
Բ.Գևորգյան		Հանձնաժողովի անդամ
Գ. Սարգսյան		Հանձնաժողովի անդամ
Գ. Սարգսյան		Հանձնաժողովի քարտուղար